

ՔՈՒՐ ԱՌԻՍՏԵՐՈՒ ՅԱՐՄԱՐ ՈՐԱԿԱՒՈՐ ԵՒ ԱՐԾԱԹԱՉՈՑ ԼԱՐԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ



ՊՈՒՐՑ ԸՆՍՈՒՄ, ՍԱՐԱՋ ՓՈՂՈՑ, ԵՇՈ. 260299, ՉԱԼԵԱ, ՍԻՐԻՍ ՄՈՒՍԱ, ԵՇՈ. 885168 FAX: 961 - 1 - 888008

ԱԶԳԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 Լ.Ո. 73ԳԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 244 (20706) ՇԱԲԱԹ, 30 ԳԵԿՏԵՄԵՐ 2000 10 ԷՁ

Nous vous souhaitons une Bonne et Heureuse Année 2001, et prions nos clients de retirer les relevés et les arrêtés de leurs comptes au 31 Décembre 2000, ainsi que la correspondance et les avis qui leur sont destinés, à tous nos guichets, à partir du 2 Janvier 2001.

BANQUE LIBANO-FRANÇAISE

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԻԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽԱՂԱՂԱՐԱՐ ՆԱԽԱՉԵՈՒՆՈՒԹԻՒՆԸ ԶՈՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԶԻ ՎԱՅԵԼԵՐ Ո՛Չ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒՆ, ՈՉ ԻՍՐԱՅԵԼԱՑԻՆԵՐՈՒՆ ՍՕՏ

Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Բիլինթոնի խաղաղարար նորագոյն նախաձեռնութիւնը դժուարութիւններու կը բախի: Պաղեստինցիներուն Կիւնտայ գործողութիւններն ու իսրայէլեան հարցախոյններու արդիւնքները ցոյց կու տան, որ ամերիկեան նախաձեռնութիւնը զօրակցութիւն չի վայելել որչա՞նչ ամերիկեան եւ ոչ ալ իսրայէլեան շրջանակներու մէջ:

Պաղեստինցի Կիւնտայներ չհնգաբարձ օր իսրայէլացի երկու Կիւնտայներ սպաննեցին Կապա - Իսրայէլ սահմանագիծին վրայ: Չիւնտայներէն մէկը ականներու մասնագէտ էր: Իսկ Թէլ Աւիւի մէջ, օթոպիւսի մը ականահարուը 14 վիրաւորներ պատճառեց: Իսրայէլեան ուժերը հաւաքարձեցին փակելով Կապան ու Այսրտրդանանը՝ արգիլելով հապարաւոր պաղեստինցի գործաւորներու Իսրայէլ մուտքը:

Քիւնթըն, որ կը փորձէ նստաշրջանը ւարտել խաղաղութեան համաձայնագիրով մը Իսրայէլի ու պաղեստինցիներուն միջեւ, ըսաւ, որ խափանարարական գործողութիւններու նպատակն է ձախողութեան մատնել իր նախաձեռնութիւնը, որ կը մտի վերջ տալ եռամսեայ արինահեղութեան, որ աւելի քան 345 Կոն ու հապարաւոր վիրաւորներ խլած է:

Իսրայէլեան բանակը երէկ վերստին ապահովութեան խիստ միջոցառումներ որդեգրեց Աքսայի մկկիթը մուտք գործող պաղեստինցիներուն հանդէպ: Աքսայի ինթիֆատային բռնկումէն ի վեր, իսրայէլեան ուժերը խիստ միջոցառումներ կ'որդեգրեն Ուրբաթ օրերը, յատկապէս՝ կէսօրուան հաւաքական աղօթքին առիթով:

Միւս կողմէ, Քիւնթըն դիտել տուաւ, որ հակամարտ երկու կողմերը մօտեցած են համաձայնագիր մը ստորագրելու հանգրուանին:

Շար.՝ էջ 10

ՇՆՈՐ ՀԱՒՈՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան եւ դեպարտմենտի անունից շնորհաւորում եմ Լիբանանի հայ համայնքին Ամանորի եւ Սուրբ Ծնունդի կապակցութեամբ:

Միւրեւի՛ հայրենակիցներ, քոյրեր եւ եղբայրներ, մաղթում եմ բոլորի՛ք քաջաոռոշութիւն, երջանկութիւն, ամենայն բարիք եւ նուիրական իրաւունքներ:

Թող որ 2001 թիւը լինի յաջողութիւնների, նոր նուաճումների եւ խաղաղութեան տարի մեր սիրելի Հայրենիքի եւ Լիբանանի, ինչպէս նաեւ ողջ աշխարհի համար:

Լիբանանի Հանրապետութիւնում Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան

ԱՐՄԱՆ ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԻ ԳՐԱԽԱՆՈՒԹԻ ԸՆԴԱՐՉԱԿԱՆ

ԵՒ ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԶՈՅՓ ԱՌԻՍՏԵՐՈՎ՝

15% 35% 25% 70%

ԳԻՐՔԵՐՈՒ ԲԱՅԱՌԻԿ

ԶԵՂՉ ՎԱՃԱՌՔ

18 ԳԵԿՏԵՄԵՐ 2000ԷՆ 18 ՅՈՒՆՈՒՄ 2001

- ՅԱՆՈՒԿ ԳՐՆԵՐ
- ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ ԶԵՂՉԱՆ ԱՐԻՍՏԵՐՈՒԹԻՆԵՐ
- ՀԱՐԵՐՈՒՄ
- ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՍԵՐՎՈՒԹԻՆԵՐ
- ՄԵՆՈՎԱԿԱՆ ՀՐԱՍԵՐՎՈՒԹԻՆԵՐ

ՕԳՏՈՒԷ ԱՅՍ ԲԱՅԱՌԻԿ ԱՌԻՍՏԵՆ ՏՕՆԱԿԱՆ ԱՅՍ ՕՐԵՐՈՒՄ ՓՈՔՐ ԳՈՒՄԱՐՈՎ ՄԵՇԱՐՔԷՔ

ԳԻՐՔԵՐ ՆՈՒՐԵԼՈՎ ԲՆՈՒՄԱՐ

ՄԵՇ ՈՒ ՓՈՔՐ ԲԱՐԵԿԱՆՏԵՐՈՒԿ:

ԲԱՅԱՌԻԿ ԶԵՂՉ ԺԱՄԱԿԱՆՈՒԹԻՆԵՐ ԳՐԱԽԱՆՈՒԹԻՆԵՐ ԲԱՅ ԵՆ ՄԱՅՆ ՄԻՆՉԵՒ

ԵՐԵՎԱՆԵԱՆ ԺԱՄԸ 8:00, ՆԵՐՍԻՍԻԱՆ ԿԵՐԱՅԻՆ ՕՐԵՐԸ:

ՀԱՅՅԷ ԸՆԴՅՈՅՔԵԱՆ ԿԵՐԱՅԻՆ ՊՈՒՐՑ ՀԱՄՈՒՑ ՀԵՈ. (01)241263/4:

ԿԱՂԱՆԴԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ

ՀԱՅԱՏՈՑ ԹԱՂԵՐՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ 25ԱՄԵԿԱԿՆ ՆՈՒՐՈՒՄՈՒՄ «ԱԶԳԱԿ» ՀՐԱՍԵՐՎՈՒԹԻՆԸ՝

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ

Պատմական - վկայակոչական ընթացիկ գիրք մը, որ կը ներկայացնէ 1975-1990 լիբանանահայութեան ինքնապաշտպանութեան առօրեան իր զանազան երեսներով: 416 էջ, 11 գլուխ՝

- Ազգային եւ քաղաքական փորձառութիւններ
- Արժեւորումներ
- Պատմութեան համար
- Վկայութիւններ եւ վերլուծումներ
- Ուղեւոր կը յիշենք...
- Յիշատակելիները
- Հ.Յ.Դ.ի եւ հայութեան դէմ ոճիւրներ
- Հայրենական արձագանքներ
- Սփիւռքեան արձագանքներ
- Հին օրերու վկայութիւններ նոր օրերու համար
- Թիկունքի աշխատանքները

Ստանալ «Ավդալ»ի ցրուիչներէն եւ հետեւեալ գրախանութիւններէն՝ «Համազգային», «Նարեկացի», «Ոսկեղար», «Ուրֆայեան», «Obelix», «Կոմիտաս», «Շիրակ» եւ «SAVA» (Արձար): Սակ՝ 15,000 Լ. 00:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆԻ ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան մամուլի ասուլիսի մը ընթացքին անդրադարձաւ 2000ին Հայաստանի վարած արտաքին քաղաքականութեան:

Նախարար Օսկանեան ըսաւ, որ Կոմիտասի մէջ Հայաստանի վարած է ետա-

լուծման գործընթացին որուն նպատակները եղած են Լեւոնային շարադրի հարցի լուծում, շրջանային գործակցութեան զարգացում եւ անմիջական դրացիներու հետ բարի դրացիական յարաբերութիւններու հաստատում: Ան նշեց, որ Լեւոնային շարադրի տագնապի

Շար.՝ էջ 10

ՌՈՊԷՐԹ ՔՈԶԱՐԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոզարեան Չորեքշաբթի, 27 Գեկտեմբերին, հանդիպում մը ունեցաւ 70է աւելի գործարարներու հետ, որուն ընթացքին ամփոփ ետք երկրի տնտեսութեան միանալ նուաճումներուն վրայ, լսեց անոնց կարծիքներն ու տեսակէտները կառավարութեան տնտեսա-

կան քաղաքականութեան վերաբերեալ: Նախագահը առաջին հերթին ընդգծեց յառաջիկայ տարուան ծրագիրներու պարզ եւ յստակ ըլլալու անհրաժեշտութիւնը, որպէսզի բոլոր գործարարները հնարաւորութիւն ունենան ճիշդ հաշուարկներով շահութաբեր գործ տանալ: «Ինչքան շահութաբեր լինի պիտի նշուի,

այնքան հարուստ կը լինի պետութիւնը եւ մարդիկ այնքան աւելի յալ կ'ապրեն», շեշտեց նախագահը: Ապա, ընթացիկ տարուան տնտեսական բնագաւառի արդիւնքները «անհամեմատելիօրէն յալ» բնորոշելէ ետք, նախագահը մանրամասնեց անոր ընդհանուր արդիւնքները:

Շար.՝ էջ 10

2001ԻՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱԶԱՆԳՆԵՐ ՅԱՏՈՒԿ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՏԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Իր նոր տարուան խօսքին մէջ, Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Մայքըլ Լեմըն կրնալ արձագանք տալ իր արձագանքներուն վրայ, որոնք կարեւոր են Հայաստանի համար:

Դեսպան Լեմըն ըսաւ. «Մենք յատուկ նշանակութիւն կու տանք 2001ին, իրենց իւրաքանչիւր տարի մը, որ կը նշէ 1700ամեակը»: Դեսպանին համաձայն, կարեւոր է որ Հայաստան կարենայ լարել իր ուժերը, յարթահարեալ ճանապարհով համար 27 Հոկտեմբերի տագնապը եւ ներքին ամուր կայունութեան մը ի խնդիր կարենայ միասնութիւն ստեղծել:

Կ'ԸՍԵ ԳԵՍՊԱՆ ԼԵՄԸՆ եակ մուտքին, Մ. Նահանգներ պիտի շարունակեն գործակցել Հայաստանի հետ եւ յատուկ քայլեր պիտի առնուին Հայաստանի տնտեսութեան զարգացման եւ վարչական փոփոխութեան ղեկավարութեան պայմաններին: Դեսպանը յոյս յայտնեց նաեւ, որ նոր հազարամյա

ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ

Նոր Տարուան առիթով «Ազդակ» լոյս պիտի չտեսնէ Երկուշաբթի 1 Յունուար եւ Երեքշաբթի 2 Յունուար 2001ին: Մեր յաջորդ թիւը՝ Չորեքշաբթի 3 Յունուար 2001ին:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

«ԱԶԳԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԲԱՅԱՌԻԿ

Պատկերազարդ, ճոխ բովանդակութիւն, անդրադարձ՝ 2000ի գլխաւոր իրադարձութիւններուն: Յատուկ թղթածրարներ՝ Հայ Դատի եւ Համաշխարհային հայութեան մասին:

E-MAIL ԱՐՇԱԻ ԿՈՉ

Միացեալ Նահանգներու Հայ Դատի Յանձնախումբն ու Հելլէնեան Հիմնարկը, գործակցաբար կազմակերպած են Միացեալ Նահանգներու ընտրեալ նախագահ Ջորձ Ուոքըր Պուշի, փոխ նախագահ Տիմ Չէյնիի եւ ազգային ապահովութեան նշանակեալ խորհրդատու Քոնտրոլեցա Ռայսի ուղղուած նամակագրական եւ հեռաձայնային արշաւը: Արշաւը կը նպատակադրէ արգիլել Թուրքիոյ վաճառուելիք 4,5 միլիարտ տոլար արժողութեամբ 145 ռազմական ուղղաթիւներու գործարքը:

Հայ Դատի յանձնախումբին եւ Հելլէնական Հիմնարկին կողմէ Քոնտրոլեցա Ռայսի ուղղուած նամակներուն մէջ կ'ըսուի, թէ Միացեալ Նահանգներու կողմէ Թուրքիոյ կատարուելիք վէճերու վաճառքը վերջինին կողմէ պիտի օգտագործուի բռնաբարելու համար մարդկային իրաւունքներ: Թուրքիոյ Կիւնտայ նաեւ յաւելեալ սպառնալիք մըն է շրջակայ երկիրներուն՝ Յունաստանի, Կիպրոսի եւ Հայաստանի համար: Նամակը նաեւ կ'անվարկէ Թուրքիոյ տնտեսական վատթար վիճակին:

Նշենք, որ Քիւնթընի վարչամեքենան տրամադիր էր Թուրքիոյ վէճի վաճառքի արտօնագիր տալու Թեքասի ընկերութիւններէն մէկուն:

Այս առնչութեամբ նորընտիր նախագահ Պուշի կեցուածքը յստակ չէ:

Հ. Յ. Գ. Լիբանանի Երիտասարդական Միութիւնը կու գայ իր ձիգը միացնելու վերին նախաձեռնութեան եւ կոչ կ'ուղղէ բոլորին մասնակցելու e mail արշաւին:

Կը ներկայացնենք Ազգային ապահովութեան խորհրդատուին՝ Քոնտրոլեցա Ռայսի e mailի հասցէն.- advice@bushcheneytransition.com եւ նամակի օրինակ մը՝

Dear Ms. Rice

I am writing to urge the US President - elect to oppose the sale of attack helicopters to Turkey. Sending these attack aircraft to Turkey runs directly counter to the interests and values of the international community.

This deal will aggravate regional tensions and will provide Turkey with arms it will very likely use to violate human rights or launch offensive operations against neighboring states.

Please tell the US president that he should publicly oppose this sale and any other deals that threaten turkish citizens and Turkey's neighbors, Greece, Armenia and Cyprus.

Thank you.

Անոնք, որոնք կարելիութիւն չունին ուղղակի e mail դրկելու, կրնան կապուիլ 03 - 773829 թիւին, կամ ԼԵՄԻ կեդրոն ամէն օր ժամ 6:00էն ետք՝ (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն) 01 / 260820 թիւին եւ կամ կրնան իրենց անունը դրկել ԼԵՄԻ e mailի հետեւեալ հասցէին՝ lemagan@cyberia.net.lb

Կարելի է նաեւ վերոյիշեալ նամակէն օրինակ մը գտնել ԼԵՄԻ websiteին մէջ, հետեւեալ հասցէով.- www.lemagan.com

Հ. Յ. Գ. ԼԵՄԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՆԱՄՆԱԿ

Պեյրուի 20 Գեկտեմբեր 2000

Յագեյի խմբագրություն «ԱԶԳԱԿ» օրաթերթի,

Ստորագրեալ՝ Վիգեն Փաթանեան, «ԱԶԳԱԿ»-ի 16 Գեկտեմբեր 2000ի թիվին մէջ կարդացի խումբ մը հայորդիներու կողմէ գրուած նամակ մը, որ կ'անդրադառնար LBC պատկերասփիւռի կայանէն տրքք. Զ. Նուժէյմի «Խորականութիւն» յայտագրին ընթացքին հայ երիտասարդի մը ունեցած ելոյթին:

Կը յայտնեն, որ ես եմ խնդրոյ առարկայ անմը. կը ցաւիմ, որ յայտագրին ղեկավարը ընդմիջեց զիս եւ առիթ տուա թիրիմացութեան: Անկախաբար ձեր հրատարակած նամակին մէջ եղած արտայայտութիւններուն անարդար եւ անտեղի բնոյթէն, կ'ուզեմ կատարել կարգ մը ձշռումներ յուսալով, որ նամակս կը հրատարակէք ձեր թերթին համապատասխան էջով եւ սինակով:

Յայտագիրը «հայկական ծագումով լիբանանցիներ» որակումը կատարելով հանդերձ կը ձգէր այն տպաւորութիւնը, թէ Լիբանանի հայ համայնքը մեկուսացած է եւ կը գտնուի գրեթէ յուսանցքի վրայ. իմ միջամտութիւնս կը ձգտէր բացատրել, թէ հայերը ինքնուրոյն դիմագիծով օժտուած լիբանանցիներ են, նման եւ հաւասար՝ բոլոր միւս համայնքներուն, այն տարբերութեամբ, որ հայերը տակաւին չեն տիրապետեր արաբերէն լեզուին, ինչ որ պատճառ կը զրկէ պետական եւ հանրային պաշտօններէ եւ երբեմն նաեւ հեգնանքի առարկայ կը դարձնէ:

Իմ արտայայտութեամբ ես շեշտեցի արաբերէն լեզուի պատշաճ ձեւով դասաւանդումին կարեւորութիւնը եւ պահանջեցի պետական օժանդակութիւն՝ ապահովելու համար լիբանանահայերու շաղախումը երկրի համայնքային դրութեան: Ես երբեք չըսի թէ արաբերէնը պէտք է դասաւանդուի ի հեճուկս հայերէն լեզուին: Մեր լեզուն, մշակոյթը եւ կրօնը մեր ինքնուրոյնութիւնը նշոյլ արժէքներ են եւ անոնց պաշտպանութիւնը եւ պարգացումը մեր համապատասխան կառոյցներուն եւ կազմակերպութիւններուն իրաւունքն է եւ պարտաւորութիւնը:

Յարգանք՝ Վիգեն Փաթանեան

ՇԷՅԽ ՔԱՊԱԼԱՆԻ ԿՈՉԸ՝ ԼԻԲԱՆԱՆՅԻՆԵՐՈՒՆ

Շիիներու Գերագոյն Խորհուրդի փոխ նախագահ շէյխ Ապտէլ Ամիր Քապալան երէկ արտասանած իր քարոզին մէջ ըսաւ, որ Լիբանան վտանգաւոր կացութեան առջեւ է եւ անոր կը սպասեն մեծ եւ վտանգաւոր մարտահրաւերներ, հետեւաբար անհրաժեշտ է պահպանել միասնութիւնը:

Շէյխ Քապալան կոչ ուղղեց մշտական հանդիպումներու եւ երկխօսութեան ու խորհրդակցութեան միջոցաւ լուծելու բոլոր հարցերը: «Քաղաքական իշխանութիւնն ու ապահովութեան մարմինները պէտք է ըլլան արդար բազուկը, եւ ապահովութիւնն ու արդարութիւնը շնորհելով բոլորին, պէտք է խստի պատժեն բոլոր անոնք, որոնք վնաս կը հասցնեն հայրենիքին», ըսաւ ան:

ՊԸՐՐԻ ԸՆԴՈՒՆԵՅ ՀԻԼԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ ընդունեց Միացեալ Նահանգներու դեսպանատան գործավար Տէյվիտ Հիլը, որ տեսակցութենէն ետք ոչ մէկ յայտարարութիւն կատարեց:

Խորհրդարանի նախագահը ըսաւ, որ հանդիպումին ընթացքին վարմանը յայտնած է հարաւային Լիբանանի համար Ուաշինգթոնի յատկացնելիք օժանդակութիւններու «համեմատ» ըլլալուն եւ հարց տուած՝ Լիբանանի նուիրատու երկիրներու խորհրդածոյցովի ձակատագրի մասին:

Պըրրի ամերիկացի դիւանագետին նաեւ ըսաւ, որ Լիբանան յաճախ կը լսէ պահանջներ, որոնք կ'իյնան Խորալի շահերը պահպանելու ծիրին մէջ, բայց պահանջ չի լսեր Խորալի կողմէ Լիբանանի օդային սահմաններու խախտումներուն եւ այլ ոտնձգութիւններու վերջ դնելու ուղղութեամբ:

ՄԱՀԱԶԳ

Տիար Պատրիկ Կիւլպէնկեան Տէր եւ տիկին Յարութիւն եւ Հերմինէ Փափազեան եւ զաւակը Աւետիքեան ընտանիք Սարեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօրաբորջ եւ ազգականին՝

ՄԱԿԻՆԷ ՄՂՁԱԻՏԻՔԵԱՆԻ

Մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 29 Գեկտեմբեր 2000ի առաւօտեան ժամը 3:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Թաղման արարողութիւնը կատարուեցաւ Ուրբաթ, 29 Գեկտեմբեր 2000ին, Փրքի Շրջապէջի մատրան մէջ: Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեային ընկալարանը, Պէլ Վիու, Ուրբաթ 29 եւ Շարաթ 30 Գեկտեմբերին:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԸՆՍՈՒՏ ԿԸ ՁԵՆՆԱՐԿԷ ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ ՇՐՋԱՊՏՈՅՏԻ ՄԸ

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտ երէկ յայտարարեց, որ խորհրդակցաբար հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ Լահուտի հետ եւ անոր պահանջով՝ ՄԱԿի մօտ Լիբանանի մնալուն ներկայացուցիչ Սալիմ Թատուրիին ցուցմունք տուած է միջազգային մարմինին մօտ արձանագրելու Եւրալիի դէմ պաշտօնական գանգաւ մը. Լիբանանի դէմ անոր գործած արարքներուն, խախտումներուն եւ այլ բռնարարքներու դէմ:

Համմուտ յայտնեց, որ այս դէպքերուն առնչութեամբ գանգաւուն մասին տեղեակ պահուած է հարաւային Լիբանանի մէջ ՄԱԿի խաղաղարար ուժերու հրամանատար Վոր. Սէթ Բոֆի Օփէնկ:

Նախարար Համմուտ Երկուշաբթի օր պիտի սկսի շրջապտոյտի մը, որուն ընթացքին պիտի այցելէ արաբական երկիրներ: Շրջապտոյտը պիտի սկսէր Թունուզէն, որ Համմուտ պիտի մասնակցէր Գահիրէի արաբական գերաստիճանին կազմուած անոր որոշումներու հետապնդման յանձնախումբի ժողովին: Աւելի ուշ լրատու աղբիւրներ հաղորդեցին, թէ որոշուած է ժողովը յետաձգել Հինգշաբթի օրուան, եւ վայն գումարել Գահիրէի մէջ:

Արտաքին գործոց նախարարութեան աղբիւրները յայտնեցին, թէ նախարար Համմուտ ժողովին ընթացքին պիտի վերահաստատէ իր կէցւածքը՝ պաղեստինցի գաղթականներուն առնչութեամբ, ընդգծելով, որ Լիբանան կը մերժէ իր հաշտուն այս հարցը լուծելու փորձերը: Նախարարը նաեւ պիտի արձարժէ Մապարէի Շրպայի վերատիրանալու, հարաւային շրջանները սկանակերծելու եւ Խորալի մօտ արգելափակում լիբանանցիներու հարցերը:

ԱՄՍՐԻՊ ԿԸ ՄԻՋՆՈՐԴԷ ԶԸՂՊԱԼԼԱՅԻ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԻՋԵՒ

Աւստրիոյ պաշտպանութեան նախարարութեան բանբեր մը երէկ յայտարարեց, թէ Աւստրիա միջնորդութիւն կ'ընէ Հրկայալայի եւ Խորալի միջեւ գերիներու փոխանակումին համար:

«Այս բանակցութիւնները սկսած են ամիսներ առաջ», ըսաւ բանբերը. յայտնելով, որ Աւստրիոյ պաշտպանութեան նախարարը խորալացիներու դիմումով հաղորդակցութեան մէջ մտած է երկու կողմերուն հետ:

JACK GIFTS advertisement featuring a gift box and contact information for branches in Bourj Hammoud and Bourj Hammoud, Art Center.

GAS G. Ayanian & Sons advertisement featuring a chandelier and contact information for Dora and Gemayzeh.

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՆԸ

Ճակատագրական այս օրերուն, իր հայրենի ու արտերկրի բոլոր կառոյցները ծրայածն անորոնով կանգուն պահող բազմահազար ՀՕՄ կանգներուն անունով, կ'ողջունէ մոր դարու եւ հազարամեակի առաջին Ամառորը: Հայ Օգնութեան Միութիւնը ունի այն խոր հաւատքը որ 2001ը պիտի ըլլայ դրական արդիւնքներու տարի՝ համահայկական երազներու իրականացման համար տարող մեր սրբազան պայքարի ճամբուն:

Հաւախեցն ու Արցախէն մինչեւ հեռաւոր Ամերիկաները, միշտ ժողովուրդից հետ ու ժողովուրդից համար, ՀՕՄը, իր աշխարհացրի ազնայնութեամբ ու համակիրներուն կը մաղթէ երջանիկ ու լաւաբանութիւններով լեցուն տարի մը՝ որու ընթացքին, միացեալ տեսլականով ու կամքով պիտի շարունակենք աշխատիլ՝ յանուն հայութեան արդար դատի յաղթանակին եւ Հայաստանի ու Արցախի գոյգ հանրապետութիւններուն յարաճուն հզօրացման ու բարգաւաճման:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՆ

Radio advertisements for «Վանայ 2այն» and «ԳՐՕ» stations with frequencies and broadcast times.

Advertisement for «ԱՄԱՉԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՆ» featuring Domino Tower Club - Bourj El Chazal, Ashrafieh.

Advertisement for USU3UNP and USU3UNP featuring «ԳՐՕՇԱԿ» and «ՁՄՐԱՆ ՇԵՄԻՆ...» with contact details.

Advertisement for «ԱՐՍԱՆԵԿԱՆ ՀՐԱԻԷՐ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՅԱԿՈՔ ԳԱՐԱՅԵԱՆ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳՐԻԳՈՐ ԽՊՈՅԵԱՆ» with contact information.

Advertisement for «ԱՐՍԱՆԵԿԱՆ ՀՐԱԻԷՐ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՅԱԿՈՔ ԳԱՐԱՅԵԱՆ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳՐԻԳՈՐ ԽՊՈՅԵԱՆ» with contact information.

ՀՐԴԵՅ՝ ԵՐԵՒԱՆԻ ՕՓԵՐԱՅԻ ԵՒ ՊԱԼԵԻ ԱԿԱԴԵՄԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔԻՆ ՄԷՋ

Չորեքշաբթի, 27 Դեկտեմբերի առաւօտեան հրդեհ մը ծագեցաւ Երեւանի Օփերայի եւ Պալեի ակադեմիական թատրոնի շէնքին տանիքը:

Հրդեհը մոխրացուցած է տանիքին 1700 քառ. մէթր մակերես ունեցող փայտէ բաժինը: Մարդկային վնաս չկայ: Թատրոնի ճարտարագիտական անձնակազմի ղեկավար Սուրէն Աղաբաբայեան յայտնեց, որ տանիքին վերանորոգման համար նախապէս պետական պիտոճէին յատկացուած էր 85 միլիոն դրամ, սակայն հրկիպուած բաժինը տակաւին չէր նորոգուած: Ան բայ, որ հրդեհը մարելու համար օգտագործուած շուրջ շատ քիչ վնաս պատճառած է սրաի բեմին:

Ս. Աղաբաբայեան բայ, որ տակաւին յստակ չեն հրդեհին պատճառները: Հրդեհին պատճառով 29 Դեկտեմբերին նախատեսուած համերգը յետաձգուած է 13 Յունուարին, սակայն Երեւանի փոխ քաղաքապետ Կամո Արեւեան յայտնեց, որ թատրոնի շրջափակին մէջ նախատեսուած տօնակատարութիւններու ծրագիրը պիտի փոխուի:

(ԱՐՄԷՆՓՐԷՍ)

«ԱՐՄԷՆՔՕ» ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԽԱՓԱՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱՒ

Հինգշաբթի, Դեկտեմբեր 28ի առաւօտուն, Հայաստանի կապը միջազգային համակարգչային ցանցին հետ խափանուցաւ, երբ անձանօթներ ծախրով մը հարուածեցին Հայաստանի ինթերնէթի մեծագոյն ընկերութեան «Արմինքօ»ի համակարգիչները, անիմաստ տեղեկութիւններու տարածումով ծանրաբեռնելով ցանցը:

Ցարդ յայտնի չէ, թէ ով է հեղինակը այս խափանարարութեան եւ որ երկրէն կատարուած է արարքը:

Ընկերութեան թեքնիք տնօրէն Գրիգոր Սաղեան յայտնեց, թէ ձեռք առնուած են միջոցներ, որոնց բերումով համակարգչային կապը սկսած է վերահաստատուիլ, սակայն միայն Հայաստանէն դուրս կարելի է դիւրութեամբ կապուիլ: Հակառակը տակաւին կը մնայ շատ դժուար:

«Արմինքօ» պէտք է դիմէ «Թելկոմ» ընկերութեան (որուն հետ համաձայնութիւն ունի), որպէսզի ան կարենայ «պտիչէ» անցընել համակարգչային փոխանակումները:

ԻՐԱՆ - ՌՈՒՄԻԱ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԼԱՅՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Իրան եւ Ռուսիա Հինգշաբթի օր յայտնած են, թէ պիտուորական լայնածիր գործակցութեան շուրջ համաձայնութիւն մը գոյացուցած են, ինչպէս նաեւ անոնք յայտարարած են, թէ ռուսեւամերիկեան 1995ի մէկ համաձայնագիրը, որ կ'արգելակէ Մոսկուայի կողմէ Իրանի արանդական պէնքերու վաճառքը, գործնապէս մեռած է:

Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Իկոր Սերկէե Թեհրանի մէջ իրանցի իր պաշտօնակիցին՝ Ալի Շամիանիի հետ մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ համաձայնագիրը դարձած է տուեալ մը ըլլալէ:

Շամիանի բաց է, թէ Իրան եւ Ռուսիա պաշտպանութեան մարզին մէջ նմանօրինակ տեսակէտ կը բաժնեն նկատի ունենալով ՕԹԱՆԻ ընդարձակումը, ԱՖղանիստանի տագնապը եւ կողակաւի եւ Կեդրոնական Ասիոյ մէջ արեւմտեան պղծութիւնը:

Մ. Նահանգներ Հինգշաբթի օր մտահոգութիւն արտայայտած են այն տեղեկութիւններուն մասին, թէ Ռուսիա կը ծրագրէ պէնք ծախել Իրանի,

դիտել տալով, որ անոնք սպառնալիք պիտի ըլլան Միջին Արեւելքի մէջ իրենց շահերուն:

Չորեքշաբթի օր Սերկէե Թեհրանի մէջ յայտնած էր, թէ Մոսկուայի միջազգային համաձայնագրերը պիտի յարգէ եւ պէնքի որեւէ վաճառք «երրորդ երկրի մը վնաս պիտի չհասցնէ»:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԳԻՇԵՐԸ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Այսու ուրախութեամբ կը ծանուցանենք, որ մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Էրիստոսի մարդեղութեան 2001րդ տարեմուտի գիշերը, 31 Դեկտեմբեր 2000ի կէս գիշերին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ տեղի պիտի ունենայ Սուրբ եւ անմահ պատարագ:

Պիտի պատարագէ՛

ԳԵՐՇ. Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

Վեհափառ հայրապետին տնօրինութեամբ յետ այսու Յունուար 1ի Ս. պատարագը պիտի մատուցուի Կաղանդի գիշերը՝ ժամը 12:00էն սկսեալ, նկատի ունենալով որ նոր բացուող տարուան առաջին ծամերուն աւելի խորհրդայինց է ու նպատակայարմար Սուրբ պատարագին մատուցումը: Հետեւաբար, կոչ կ'ուղղենք մեր հաւատացեալներուն՝ Նոր Տարուան անդրական ուրախութենէն ետք ներկայ գտնուելու Սուրբ պատարագին եւ աղօթքով ու փառաբանութեամբ դիմաւորելու բացուող Նոր Տարին:

Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս Նոր Տարուան շնորհաւորութիւնները պիտի ընդունի վեհարանի դահլիճին մէջ, պատարագէն անմիջապէս ետք, ինչպէս նաեւ Յունուար 1ի առաւօտեան ժամը 10:00էն 13:00:

ԴԻՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԱՆՈՒՇԱՎԱԵԱՌ ՍԱՐԳԻՍ

Solankhian opteroni
խրախճանքի ձեր սեղանները ճոխացուցէք
համեղ անուշեղեններով

ԱՐԱՐՍ ՓՈՂՈՑ
ՊՈՒՐԵ ԲԱՄՈՒՏ ԲԵՌ. 261475

ԱՅՍՕՐ՝ «ՅԵՔԻԱԹՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՅ»Ը՝ «ԷԼ. ՊԻ. ՍԻ.»ԵՆ

Այսօր, ժամը 10:30ին, «Էլ. Պի. Սի.»ի «Նահարքում Սայիտ» յայտագիրէն հետեւեցէք Համազգայինի «Տեքիաթներու աշխարհ» հանդէսին մասին յատուկ հարցազրոյցին:

ARA TRAVEL IATA ԱՆԿԱՍ

ARMENIAN AIRLINESի SALES AGENT,
ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՅԱՅՏԵ ԻՐ ՅԱՐԳՈՅ ՅԱՃԱԽՈՐԴՆԵՐՈՒՆ, ՈՐ Կ'ԱՊԱՇՏՈՎԷ

ՊԵՅՐՈՒԹ - ԵՐԵՒԱՆ - ՊԵՅՐՈՒԹ
ԵՒ ՇԱԼԵՊ - ԵՐԵՒԱՆ - ՇԱԼԵՊ
ARMENIAN AIRLINES ընկերութեան
• ռեյանաւաչին տոմսեր • ապրանքի փոխարկութիւն

ԱՐԱ ԹՐԱԿԸԼ,
Պոլոճ Շամուտ, Նամակատան շէնք,
Շեռ. 266594 - 261296 : FAX: 261296

ԹՈՒՐԻՔԻԱ

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ ԴԷՄ ՏԱՆՁԱՆՔԻ

ՆՈՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՊՈԼԻՍ, 29 (ՌՈՅԹԸՐԸ).- Թրքական իշխանութիւնները յստակօրէն հերքած են, թէ սպաննած են տանջանքներու ենթարկած են բողոքի դիմած բանտարկեալներ, երբ անցեալ շաբաթ ապահովութեան ուժեր յարձակած են երկրի տարածքին շուրջ 20 բանտերու վրայ: Առնուազն 31 հոգի սպաննուած է յարձակումներուն ընթացքին:

Այս գծով արդարութեան նախարարութեան մէկ հաղորդագրութիւնը յաջորդած է հաւաքական ներումի մը շնորհիւ ազատ արձակուած բանտարկեալներու ամբաստանութիւններու:

Ուրբաթ օրուան թերթերը յարձակումներուն ընթացքին տանջանքներու գծով բանտարկեալներու կողմէ նոր ամբաստանութիւններ հրատարակած են:

Արդարութեան նախարար Հիքմէթ Սամի Թուրք Չորեքշաբթի օր յայտնած է, թէ շուրջ 20 հազար բանտարկեալներ ազատ արձակուած են համաձայն ներումի օրէնքի մը, որ ի պորու դարձած է անցեալ շաբաթ:

Սակայն ան աւելցուցած է, որ նշեալ քայլը, որ մաս կը կապուի բանտային դրութեան բարեկարգումի ծրագիրին, անխտիր կերպով պիտի չգործադրուի:

ԸՍՏ ԵԼԼՄԱԶԻ

ԹՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ ԴԵՐԸ ՊԻՏԻ ՓՈԽՈՒԻ

Թուրքիոյ փոխ վարչապետ Մետուք Երլմապ այս շաբաթ յայտնած է, թէ քաղաքականութեան մէջ թրքական բանակին դերը անխուսափելիօրէն պիտի փոխուի, մինչ երկիրը կ'ուղղուի դէպի Եւրոպական Միութեան անդամակցութիւն, սակայն այդ փոփոխութիւնը ժամանակ կը կարոտի:

Ան դիտել տուած է, որ թրքական բանակը Ե. Միութեան միւս երկիրներէն շատ տարբեր կացութեան մը մէջ կը գտնուի եւ «այս անդրութիւնը» կարելի չէ մէկ օրէն միւսը փոխել:

Թուրքիոյ սպայակոյտը բաց է, թէ երկրին Ե. Միութեան անդամակցութեան ի նպաստ կողմնորոշուած է, սակայն անիկա նաեւ յստակ դարձուցած է, թէ Թուրքիա պէտք չունի պիշուներ կատարելու ազգային պաշտպանութեան կապուած մարկերու մէջ, ինչպէս՝ Կիպրոսի ապագան եւ Եգէական ծովու հողային հարցերուն գծով Յունաստանի հետ բանակիճերը:

(ՌՈՅԹԸՐԸ)



Moulinex Blender

Optiblend 3

- 1 litre plastic jug
- "Pulse" Button
- Coffee mill accessory
- Cheese grater accessory

Oléa Plus Deep Fat Fryer

"Clean Express" drawer for easy filter change without getting your hands dirty
Changement aisé du filtre sans se salir les mains grâce au tiroir "Clean Express"

"Turn and Clean" function removes condensation from the viewing window allowing cooking progress to be checked without opening the lid
"Turn and Clean" pour surveiller la cuisson sans condensation sur le hublot et sans ouvrir le couvercle

En Vente dans les grands magasins, les supermarchés et chez les revendeurs agréés
Agents Généraux:
ETS. SAMMY GORAYEB & CO.
Rue Al Zar (Baïji) - Imm. Moderne - Tél. 447802/3 - 585750 - 585798




Caffe Eccellenza
CABS cafe

cafés TROTTET

Arôme et Qualité
Le Bon Espresso

Distributeur Ex.clusif:
BACHIAN FRERES
Tél. +961 235 750 / 245 566
Portofax +961 244 691
Fax +961 244 523
E-Mail: Bf@bachi.com
BP 60540 Beyrouth - Liban



ՄԱՍԹԵՐ ՄՈՒԼ

MASTER MALL
supermarket

ԱՄԷՆ ՕՐ ԹԱՐՄ ԵՒ ԸՆՏԻՐ ՄՍԵՂԷՆՆԵՐՈՒ ԱՅԼԱԶԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ, ՆՈՒԱԶՐԱԳՈՅՆ ՄԱԿԵՐՈՎ:

ԳՆՈՒՄԴ ԿԱՏԱՐԷ՝ ՍՈՒՓԸՐՄԱՐՔԷԹ ՄԱՍԹԵՐ ՄՈՒԼԷՆ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՄՔԻ ԴՐՍԵՒՈՐՈՒՄԸ

Լիրանանի քաղաքացիական պատերազմից 25 տարի է անցել, եւ աճա մեր սեղանին է «Ազգակ» օրաթերթի նախաձեռնութեամբ հրատարակուած «Հայտնութեան եւ Լիրանանի համար» ստուարածաւալ գիրքը: Այն նուիրուած է Լիրանանի հայահոծ շրջաններին ինքնապաշտպանութեան 25ամեակին: Մեր սերունդը յիշում է 75 թուականին աշխարհասփիւռ հայտնութեան միասնականութեան ցոյցը ամենաճանաչուած լիրանանահայ գաղութին սպառնացող վտանգի օրերին: Ճեղք տուեց անգամ խորհրդային կայսերապետական անդորրը, եւ ցոյցերով ու հաւաքներով բռնկուեց նաեւ Երեւանը: Մակայն վտանգի գլխաւոր թիրախը լիրանանահայտնութիւնն էր եւ առանձնապէս նրա միջնաբերդը Պուրճ Համուտը: Գրքում քանակազտ տարի անց իրենց յուշերն են պատմում քաղաքացիական այդ պատերազմի ականատեսները, հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան կազմակերպիչները:

«Արդարեւ, Պուրճ Համուտը վայր լինելուց աւելի, դարձաւ հոմանիշը հայ ժողովրդի տոհմունութեան եւ նրա հաւաքական կեցուածքի: Պուրճ Համուտը մնաց Լիրանանի հայտնութեան արժանապատուութեան խորհրդանիշը... Այս տողերը գրուած են որպէս անձնական վկայութիւն մէկի, որն իր Առաջնորդական ծառայութեան տասնեօթ տարիները անցկացրեց Պուրճ Համուտում», գրում է գրքի նախաբանում Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա.:

15 տարի քաղաքացիական պատերազմը Լիրանանում շարունակուած էր՝ աւերակելով ամէն ինչ: Եւ միայն անօրինակ համախմբուածութիւնն ու վճռական կամքը պատուար եղան հայ համայնքին՝ չղաղանալու այդ աւերի գոհը: Համախմբուածութեան եւ միասնական գիտակցութեամբ էին զործում ազգային բոլոր կառույցներն ու քաղաքական կազմակերպութիւնները: Բայց գործի զլուխ կանգնած էր Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը: Երբ ստուճ ենք, թէ Դաշնակցութիւնը Սփիւռքում հայապահպան մեծ դեր է կատարել եւ կատարում, առաջին հերթին նկատի ենք առնում հայրենիքից դուրս ապրող հայութեան մէջ լեզուի, մշակութի եւ ոգու պահպանութիւնը, ինչպէս նաեւ Հայ Դատի հետապնդումը: Մակայն հայապահպանման բառացի իմաստով լաւագոյն օրինակը հէնց Պուրճ Համուտի ինքնապաշտպանութիւնն է: Լիրանանի քաղաքացիական պատերազմից պատուով ու փառքով դուրս գալը ոչ միայն հայ ժողովրդի պատմութեան, այլեւ Հ. Յ. Դ. գործունէութեան մի արգասաբեր էջն է: Տարիներ անց, երբ բռնկուեց արցախեան պատերազմը, ամենեւին պատահական չէր, որ ճակատի առաջին զոնում յայտնուեցին նաեւ Պուրճ Համուտի ինքնապաշտպանութեան դաշնակցական մարտիկները:

Այս օրերին, երբ նորից վերաթեմացել է իրավիճակը Մերձավոր Արեւելքում, Պուրճ Համուտի եւ այս գրքի խորհուրդը չափազանց մեծ է: Թէ՛ ինքնապաշտպանութիւնն ինքը եւ թէ՛ նրա 25ամեակին նուիրուած «Հայտնութեան եւ Լիրանանի համար» գիրքը ուսուցողական ու կողմնորոշիչ մեծ նշանակութիւն են ստանում: Չմոռանանք, որ անգամ օտարերի կողմից այդ ինքնապաշտպանութիւնը գնահատուեց որպէս ոչ միայն հայութեան միասնական կամքի դրսեւորում, այլեւ՝ հէնց Լիրանանի ամբողջականութեան պահպանման համար կարեւոր նախապայման:

ՅՈՎԿԱՆԱՆԵՆ ԵՐԱՆԵԱՆ

«Երկիր»

ՄԱԿԻ ԳԼԽԱՄՈՐ ՎԵՀՄՏՈՂՈՎԸ ՊԱՇՏՊԱՆԱԾ Է ԱԶՐՈՒՅՑԱԾՆԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՊԱՐԵՆՈՒԹԻՒՆԸ

ՄԱԿԻ գլխաւոր վեհաժողովը ընդունած է ՄԱԿԻ եւ ԵԱՀԿԻ միջեւ համագործակցութեան մասին տարեկան աւանդական բանաձեւը: Ազրպէյճանի զանգուածային լրատուամիջոցները դիւանագիտական աղբիւրներ վկայակոչելով հաղորդած են, որ ազրպէյճանական կողմին առաջարկով ընդունուած փաստաթուղթին մէջ աւելցուած է դարաբաղեան տագնապի կարգաւորման ընթացքին Ազրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը երաշխաւորող պարբերութիւն մը: Նախկին ձեւակերպումը աղօտ ընդթ կրած է եւ երկակի մեկնաբանութիւններու առիթ տուած:

Քուէարկութեան ընթացքին Ազրպէյճանի առաջարկած յօդուածը պաշտպանած են 147 երկիրներ, իսկ զէմ քուէարկած է միայն Հայաստանը:

Եզրապատի ներկայացուցիչը յայտարարած է, թէ Լեռնային Ղարաբաղի տագնապը ՄԱԿԻ գործը չէ:

Քուէարկութեան չեն մասնակցած՝ Արժանթին, Պոլիվիա, Պրագիլ, Եգիպտոս, Կուաթեմալա, Հնդկաստան, Մատակասթար, Մոզամբիք, Նեփալ, Փարակուէյ, Հարաւային Աֆրիկէ, Թայլանտ, Ուրուկուէյ, Պիեթրոուսիա, Տանզանիա եւ Թուրքմենիստան:

Նախորդ քուէարկութեան ընթացքին ձեռնպահ մնացած երկիրներն են՝ Եթովպիա, Կոնգոյի Դեմոկրատիկ Հանրապետութիւնը, Զիլի, Ժամայքա, Փրանսա, Գերմանիա, Իսրայէլ, Իտալիա, Ժափոն, Խրիստոստան, Սենեկալ, Սրի Լանքա, Սուտան, Ուկրաինա, Թանզանիա, Ռուսիա եւ Միացեալ Նահանգներ:

Ուշագրաւ է, որ անցեալ տարի Միացեալ Նահանգներ, Ռուսիա, Իսրայէլ եւ Եւրոպական Միութեան երկիրներ՝ Փրանսա, Գերմանիա եւ Իտալիա ձեռնպահ մնացած էին քուէարկութեան ընթացքին: Այս տարի անոնք քուէարկած են յօդուածին ի նպաստ: Եւրոպական Միութեան միւս երկիրները ձեռնպահ մնացած են:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԵՆ
 HAMPIG SASSOUNIAN C- 88440
 CSP - L.A.C. D -5- 232 44750
 60-TH ST. WEST LANCASTER,
 CA, 93536—USA

ԼՈՒՍԱՒՈՐԻՉԻ ԿԱՆԹՈՂԻՆ ԽՈՐ ՎԻՐԱՊԷՆ ԴՈՒՐՍ ԲԵՐՈՒՄԸ ԱԶԴԱՆՇԱՆ՝ 1700ԱՄԵԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆՑ ՄԿՋԲՆԱՒՈՐՄԱՆ

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի տօնակատարութիւնները սկսան խոր վիրապէս, ուրկէ Գրիգոր Լուսաւորիչի կանթեղը դուրս պիտի բերուի եւ փոխադրուի էջմիածին, ապա Երեւան, Հանրապետութեան հրապարակ:

Արարողութիւնը արդէն սկսած է 18 Դեկտեմբերին, խոր վիրապէս մէջ, ուր 12 միաբաններ յատուկ արարողութեամբ վառած են Գրիգոր Լուսաւորիչի կանթեղը՝ իբրեւ խորհրդանիշ հայ ժողովուրդի դարաւոր հաւատքին եւ գոյատեւման: Կանթեղը հոն պիտի մնայ 13 օր, որոնք կը խորհրդանշեն Գրիգոր Լուսաւորիչի չարչարանքի 13 տարիները:

31 Դեկտեմբերին, ժամը վեցին, Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը, բարձրաստիճան հոգեւորականներու ընկերակցութեամբ, պիտի մեկնի խոր վիրապէս: Միացեալ աղօթքէն ետք վեհապետը խոր վիրապէս դուրս պիտի բերէ կանթեղը: Ժամը ութին կանթեղը պիտի փոխադրուի էջմիածին՝ Մայր Աթոռ, ուր Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին նախագահութեամբ պիտի կատարուի յատուկ արարողութիւն, որուն ըն-

թացքին էջմիածին ժամանած Հայաստանի նախագահ Ռոպէյթ Քոչարեան եւ Գարեգին Բ. կաթողիկոս Ամենորի բարեմաղթութիւնները եւ շնորհաւորութիւնները պիտի փոխանցեն համայն հայութեան:

Ճիշդ կէս յիշերին Գարեգին Բ. կաթողիկոս կանթեղը պիտի փոխանցէ նախագահ Ռոպէյթ Քոչարեանին եւ բարձրաստիճան հոգեւորականներուն՝ աւետելով նոր դարասկիզբն ու 1700ամեայ յորեւեանը: Անկէ ետք վեհապետը պիտի վառէ Յիսուսի իջման վայրի Սուրբ Սեղանին վրայ կանթեղուած մեծ մոմը, որմէ իրենց մոմերը պիտի վառեն հանդիսութեան մասնակցողները:

Տօնախմբութեանն է մոմավառութեանն է ետք կաթողիկոսն ու նախագահը պիտի մեկնին Երեւան, Հանրապետութեան հրապարակ, իրենց հետ տանելով էջմիածին կանթեղը: Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին եւ նախագահ Ռոպէյթ Քոչարեանի բարեմաղթութիւններէն ետք պիտի յուսաւորուի հրապարակին մէջ հաստատուած պետութիւնը խորհրդանշող մեծ մոմը, եւ տեղի պիտի ունենայ ընդհանուր մոմավառութիւն:

1700ԱՄԵԱԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՄԵՋ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԶՆՈՆԱՐԿՆԵՐՈՒ ՑԱՆԿ

1.- 31 Դեկտեմբեր 2000
 Ս. էջմիածին մէջ յատուկ եկեղեցական արարողութիւն, որով ազդանշանը պիտի տրուի նոր դարասկիզբին եւ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի տօնակատարութիւններուն:

2.- 24 Ապրիլ 2001
 Ուխտագնացութիւն դէպի Տէր Զօր Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի եւ Հայաստանի նախագահ Ռոպէյթ Քոչարեանի գլխաւորութեամբ:

3.- 17 Յունիս 2001
 Տօն Ս. էջմիածին Հայ եկեղեցւոյ այս աւանդական տօնը Ս. Գրիգոր Լուսաւորիչի տեսիլքի յի-

շատակութեան տօնն է:
4.- 10ԵՆ 20 Յուլիս 2001
 Դէպի Հայաստանի տարբեր սրբավայրեր եւ մասնաւորապէս խոր վիրապէս էջմիածին - Երեւան երիտասարդական ուխտագնացութիւն, որուն պիտի մասնակցին հազարաւոր երիտասարդներ Հայաստանէն եւ Սփիւռքէն, ինչպէս նաեւ՝ այլ քրիստոնէայ երկիրներէ:

5.- 21 Սեպտեմբերի 2001
 Էթիմեմիք արարողութիւն Ս. էջմիածին մէջ՝ Հայաստանի վերանախագաման 10րդ տարեդարձին առիթով: Արարողութեան պիտի նախագահէ Գարեգին Բ. կաթողիկոս, մասնակցութեամբ քոյր եկեղեցիներու հոգեւոր պետերուն եւ անոնց ներկայացուցիչներուն:

6.- 22 Սեպտեմբեր 2001
 Միւսուրի օրհնութիւն Ս. էջմիածին մէջ:

7.- 23 Սեպտեմբեր 2001
 Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ օծում:

8.- 30 Սեպտեմբեր 2001
 Եպիսկոպոսական ձեռնադրութիւն:

9.- 4 Սուրբեմբեր 2001
 1700ամեակի յորեւեանական տօնակատարութիւններու փակում:

2001ԻՆ ՊԱՊԸ ՀԱՅԱՍՏԱՆ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ. անցեալ Յուլիոս օր յայտարարած է, թէ Յունիսին Պապը Ռոմոս Բ. պապը 2001ի Սեպտեմբերին կամ Յունիսեմբերին պիտի կատարէ դէպի Հայաստան իր առաջին այցելութիւնը:
 «Նոյեմբերի սկիզբը Վատիկան այցելութեան ժամանակ քրիստոնէութեան պետական կրօն ընդունման 1700ամեակի առիթով պապը իրաւիքեցի Հայաստան: Յրաւերը ընդունուած է եւ այժմ կաթողիկէ եկեղեցւոյ պետի ընդունման թրակամը պիտի որոշուի», ըսած է կաթողիկոսը:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԻ ԱՌԻԹՈՎ

« ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ »

Ամանորի ուրախ հանդէս

ՈՐ ԴԵՅ ԿՐ ԱՍԿԱՆ

- Զինւթոյրը եւ Եօթը ԹԿՈՒԿՆԵՐ
- Փինոքիոն եւ Քաջ Նապարը
- Կարմիր Գլխարկիկը

Եւ ուրիշ շատ շատ հերոսներ Նոր Տարուան մաղթանքներ կ'ուղղէ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ ԻՆՉԱԿՆ ՆԱԵՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԿԱՐԿԱՉ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԸ «ԱՐԵԳ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԸ «ԳԱՅԻԱԸ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՊԱՐԱԽՈՒՄԸ

Տեղի կ'ունենայ Ծաբաթ, 30 Դեկտեմբերին 2000, եւ Երկուշաբթի, 1 Յունիս 2001, իէսօրէ կտք ժամը 5:30ին, «Յ. Տէր Մեղրեան» բառերապահին մէջ:

- Տուները ստանայ **OBELIX** Ասթիլիա, Համազգայնի գրաքանութիւնը «Շաղպոյն» կեդրոն եւ **GEKA** Պարզ Համալսարան:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ» ԵՐԱԾՅԱԿԱՆ ԲՈՒԷՃԸ ՕԺՏՈՒԵՑԱՒ ԻՐ ԳՐԱԴԱՐԱՆՈՎ

Ուրբաթ, 22 Դեկտեմբերին երեկոյեան ժամը 9:00ին, Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճին մէջ տեղի ունեցաւ երաժշտական յատուկ գրադարանի բացման արարողութիւնը, ներկայութեամբ գրադարանին բարերար Պետրոս Վանյան ամուլի, երաժշտանոցին նուիրատուներ Սիլվա Վահանեանի, Նորայր Նաճարեանի, Պարա Հարֆուշի, երաժշտանոցին պատասխանատուներուն, ուսուցիչներուն, աշակերտներուն եւ բարեկամներուն:



Մարտիկ Տեմիրճեան խօսքի պահուն: Բարսեղ Կանաչեան նաեւ շնորհակալութիւններ արտայայտեց:

Հանդիսութիւնը սկսաւ անօրէն Երեւանի Երկանեանի խօսքով: Ան իր յարգանքն ու երախտագիտութիւնը յայտնեց Պետրոս Վանյան ամուլին, որոնց նուիրատուութեամբ իրականացաւ «Պետրոս Վանյան գրադարան»-ը:

Կաթողիկոսն իր անուանեց երաժշտական քոլեճը Հայաստանեան «Սիլվա» մականունով մը օժտած Սիլվա Վահանեանի եւ հաստատութեան համակարգիչ մը երեւրած Նորայր Նաճարեանի եւ Պարա Հարֆուշի: «Ընկերային եւ տնտեսական այս գիտարարային պայմաններուն մէջ մեր ազգային կրթական եւ մշակութային հարստութիւնները առաւելագոյն կարիքը ունին սրտցաօգնութեան եւ անվերապահ օժանդակութեան, որոնք միաժամանակ բարոյական մեծագոյն նեցուկ կրնան հանդիսանալ անոնց համար», ըսաւ ան:

Գրադարանին բազմահարկ գլխաւոր նուիրուած են Ապաճեան հիմնադրամի կողմէ: Անոնց դասակարգումը, ինչպէս նաեւ գրադարանի պատասխանատուութիւնը ստանձնած է երաժշտական քոլեճին երաժշտութեան պատմութեան ուսուցիչը՝ Մելքոն Տեմիրճեան:

Ապա Պետրոս Վանյան ամուլը կատարեց գրադարանին բացումը, որմէ ետք Յասմիկ Գասպարեան՝ նուիրուած դաշնակի վրայ, Երուանդ Երկանեանի շուրթակին



Ձախտն աչ՝ Նորայր Նաճարեան, Սիլվա Վահանեան, Պետրոս Վանյան, Երուանդ Երկանեան՝ խօսքի պահուն եւ տիկին Վանյան: (Լուսանկարները՝ Պ. ԶԱՌՈՒԿԵԱՆԻ)

ընկերակցութեամբ, նուազեց «Կառուկ»ը: Ունկնդրութեանն է ետք ներկայացրէ բարձրացան երաժշտանոցին երկրորդ յարկը, ուր խօսք առաւ Համազգայինի Երեւանի վարչութեան պատասխանատու Մարտիկ Տեմիրճեան: Ան, իր կարգին, բարերարներուն շնորհակալութիւն յայտնելէ ետք մասնաւորապէս երեւոյթ մը: «Լիրանանահայ գաղութին եկեղեցիներուն, դպրոցներուն եւ այլ կառույցներուն մեծամասնութիւնը կառուցուած է տասնամեակներ առաջ, երբ մեր հայրերը մեր ներկայի տնտեսական պայմաններէն շատ աւելի ծանր պայմաններու մէջ կը գտնուէին: Մեր սերունդը պարտի շարունակել անոնց շինարարական աւանդը, որպէսզի իր կարգին զայն փոխանցէ յաջորդ սերունդներուն»:

Հանդիսութեան ընթացքին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ԼՕԻԻ «ՄԵՂՐԻ»
 ՄԱՆԱԳԻՒՂ - ՊԵՅՐՈՒԹ

ԱՒԱՆԴԱԿԱՆ ԳԱՇԻ ՊԱՉԱՐ

Տեղի կ'ունենայ այսօր՝ Ծաբաթ, 30 Դեկտեմբեր 2000, առաւօտեան ժամը 9:30Ը սկսեալ, քաղաքի Ե. Մ. Բ. Մ. Ի պկումբին մէջ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԵԱՀԿԻ ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻ ԿԵՅՈՒԱԾՔԻՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՐԵՒՈՐ ԴԵՐ ՈՒՆԵՑԱՆ

ԿՐԸՄ ԷՂՈՒԱՐԴ ԴԱԶԱՐԿՆԵՐ

Հինգշաբթի, 21 Դեկտեմբերին, Հ. Յ. Դաշնակցու- թեան Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամ էղուարդ Ղազարեան մամուլին յայտնեց, որ «Հայաս- տանի ներկայ իշխանութիւնները կարեւոր դեր խաղա- ցին ԵԱՀԿի Մինսքի խումբի դիրքորոշման մէջ»:

Նշելով, որ Արցախի հարցին լուծման մէջ Մինսքի խմբակին առաջին փաթեթային առաջարկին մէջ Լեո- նային Ղարաբաղի Հանրապետութեան կարգավիճակը նախորդած էր իրրեւ Ազրպէյճանի անբաժանելի մաս, իսկ երկրորդ փուլային լուծման առաջարկին մէջ, ռազմագիտական առաւելութիւններու կորուստէն ետք, կացութիւնը պիտի յանգէր «Լեոնային Ղարաբա- ղի Հանրապետութեան ճանաչման Ազրպէյճանի կազ- մին մէջ»:

Ի. Ղազարեան այս մասին աւելցուց, թէ Մինսքի երկ- րորդ առաջարկին մէջ կար որոշ յառաջընթաց, սակայն՝ «Ի տարբերութիւն առաջին տարբերակի, անոր մէջ կանխորոշուած չէ Լեոնային Ղարաբաղի Հանրապե- տութեան կարգավիճակը՝ իրրեւ Ազրպէյճանի անբա- ժանելի մաս, իսկ ի տարբերութիւն երկրորդի՝ երրորդ տարբերակը փաթեթային է»:

Ղազարեան ընդօժեց նաեւ, որ վերջին տարբերակին մէջ կայ «Ընդհանուր պետութեան» գաղափարը, ինչ որ կը նշանակէ ոչ թէ ռուղաճայեաց, այլ՝ հորիզոնական կապեր Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ Ազրպէյճանի միջեւ:

«Պատահական չէ, որ Պաքուն, ի տարբերութիւն Երե- ւանի եւ Ստեփանակերտի, մերժեց այդ առաջարկը, շա- րունակելով պնդել, որ փաստաթուղթին մէջ մարզերը- լի «Ղարաբաղը Ազրպէյճանի կազմին մէջ ձեւակերպու- ւմը», յայտնեց ան:

Կայ նաեւ ԵԱՀԿի Պոլսոյ վեհաժողովի պարագան, ուր, ի տարբերութիւն Լիզպոնի, «արձանագրուած չէ Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան կարգավի- ճակը իրրեւ Ազրպէյճանի անբաժանելի մաս»:

Ինչ կը վերաբերի այժմու կացութեան, ան անհրա- ժեշտ գտաւ, որ հաշուի առնելով ստեղծուած իրողու- թիւնները՝ պէտք է հարցերու քաղաքական քննարկու- մէն անցնել հայ-ազրպէյճանական տնտեսական կապե- րու Հաստատումին: «Այս փոխհարաբերու- թիւններուն անհրաժեշտութիւնը թելադրած է շրջանա- յին եւ ենթաշրջանային մակարդակներու վրայ առա- րկական գործընթացներով, եւ նոյնինքն այս գործըն- թացները ժամանակին թելադրեցին թՐԱՍԵԿԱ եւ ԻՆՕ- ԿԵՅԹ ծրագիրներուն գաղափարները», ըստ ան:

Սակայն, շարունակեց Ի. Ղազարեան, կը շարունա- կէ ճնշում բանեցնել Հայաստանի վրայ, որ եթէ ան կ'ու- գէ այս երթուղիներուն մաս կազմել, ուրեմն պէտք է ետխարկուի Պաքուն պայմաններուն: Այս մարտավա- ռութիւնը, շարունակեց Ի. Ղազարեան, դատաւար- տուած է ձախողութեան, որովհետեւ՝ «պատմութիւնը կը վկայէ, որ երբ քաղաքական շահերը կը գերակշռեն տնտեսական շահերուն, ապա, իրրեւ կանոն, կը ձախ- ողին թէ՛ քաղաքականութիւնը, թէ՛ տնտեսութիւնը»:

Եզրակացնելով՝ Ի. Ղազարեան յայտարարեց. «Ճիշդ է, որ խաղաղութեան հաստատումը ազդակ կը դառնայ շրջանի տնտեսական համարկման, սակայն՝ ճիշդ է նա- եւ այն, որ այսօր, երբ կողմերը պատրաստ չեն երթա- լու փոխդիմումներու, տնտեսական փոխադարձ կապե- րու հաստատման գործընթացը կ'օգնէ հետագային ճամբայ հարթելու քաղաքական հարցերու լուծման հա- մար»:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԴՐԱՄԱՏԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

22 Դեկտեմբերին Համաշխարհային Դրամատան Երեսնամյա գրասենյակի արտակարգ եւ լիազօր ներկա- յացուցիչ Վէյա Մաստաթ լրագրողներուն հետ ունե- ցած հանդիպումին ընթացքին յայտնեց, թէ Համաշ- խարհային Դրամատան տնօրէններու խորհուրդը հաստատած է Հայաստանի կառուցներու բարեփո- խումներուն համար նախատեսուած Էս. Էյ. Սի. - 3 վարկի վերջին բաժինը՝ վեց միլիոն տոյար տրա- մադրելու պատրաստակամութիւնը:

Այս գումարին հետ միաժամանակ փոխանցուած է նաեւ Հոյանապի կառավարութեան տրամադրելիք 10 միլիոն հոյանապի կիւրորդի դրամաշնորհը, որուն յատկացումը կապուած էր Էս. Էյ. Սի. - 3 վարկին հետ:

Ըստ Մաստաթի, այս վարկին յատկացումը կարե- լիութիւն պիտի ընձեռէ արագացնելու Էս. Էյ. Սի. - 4 վարկի տրամադրման շուրջ ընթացող բանակցութիւն- ները:

Մաստաթ նշեց, թէ 2001 թուականին Հայաստանին տրամադրուելիք Էս. Էյ. Սի. - 4 վարկը կը կազմէ 50 միլիոն տոյար, որ ըստ պայմանագրին, պիտի յատ- կացուի առետուրի գարգացման:

Սուսելով Դրամատան յառաջիկայ տարուան ծրա- գիրներուն մասին՝ ան նշեց, որ բացի Էս. Էյ. Սի. - 4ԷԱ, դրամական օժանդակութիւն եւ վարկ պիտի տրա- մադրուի ուսանիթի խնդիրներու լուծման համար: Ան անցնուց նաեւ, թէ պիտի սկսի ռոտոման համակար- գերու գարգացման ծրագրին երկրորդ բաժինը (առա- ջինը ւատրած է այս տարի, 57 միլիոն տոյար արժու- րութեամբ) եւ տեղեկատուական արհեստագիտու- թեան աշակցութեան ծրագրի օժանդակութիւնը:

Յատաջիկայ տարուան ընթացքին, ըստ Մաստա- թի, Դրամատանը Հայաստանին պիտի տրամադրէ մօտ 100 միլիոն տոյար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՅԱՅՅԵՐՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԵՆԿԵՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՀԱՅԹԱՅԹԷ ՎՐԱՍԱՆԻ

«Անարք» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ Հայաստան պատրաստ է իր բարձր վոլյութով ելեկտր- րական նոր՝ Աշոցք - Նինոծմինստ ցանցին միջոցով Վրաստանին ելեկտրականութիւն հայթայթելու: 22 Դեկտեմբերին նոր ցանցը պիտի սկսէր օգտագործելի՝ յայտնելով թափ տալով Հայաստանի եւ Վրաստանի մի- ջեւ ելեկտրականութեան փոխադրման կարողականու- թեան:

Սակայն ուժեղութիւն վրացական շրջանային «Սամցխե» կեդրոնը մերժած է ստորագրել ելեկտրա- կանութեան «Արմ.էլեկթրո» ընկերութեան հետ համա- ձայնագիր մը: Ըստ վրացական ընկերութեան, «Արմ.է- լեկթրո» պահանջած գինը (ժամական մէկ քիլոուաթի համար 2,5 սէնթ) շատ սուղ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԻՆԱԲԵՐՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՂԸ ԸՐԱԺԱՐԱԿԱՆ ԿՈՒ ՏԱՅ

Հայաստանի Արդիւնաբերողներու եւ Գործարարնե- րու Միութեան խորհուրդը 22 Դեկտեմբերին գումարեց իր հերթական նիստը: Ժողովին ընթացքին միութեան նախագահ Արամ Վարդանեան այլ աշխատանքներով զբաղած ըլլալու պատճառով իր հրաժարականը ներկա- յացուց խորհուրդին. հրաժարականը ընդունուեցաւ: Հայաստանի Արդիւնաբերողներու եւ Գործարարնե- րու Միութեան խորհուրդին որոշումով միութեան նա- խագահի պաշտօնակատարի պարտականութիւնները պիտի կատարէ Արսէն Ղազարեան:

ԱՍԵՐԻԿԱՅԻ ԸԱՅԿԱԿԱՆ ԸԱՍԱԳՈՒՄԱՐԻ ՆՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ՆՃԱՆԱԿՈՒՄ

Ամերիկայի Հայկական Համագումարը Ռոս Վարդ- եանը նշանակած է Հայկական Յեղասպանութեան Թան- գարանին եւ Յիշատակումի Ծրագրին իրագործման աշխատանքներու վերահսկիչ: Իրրեւ աշխատանքները, Վարդ- եան պիտի համադրէ թանգարանի ծրագրումին ու անոր իրականացման բազմակողմանի աշխատանքները: 1979-2000 տարիներուն Վարդեան եղած է Ամերիկա- յի Հայկական Համագումարի գործադիր տնօրէնը: Միւս կողմէ, Ռոս Վարդեանի փոխարէն, Համագու- մարի Երեւանի գրասենյակի տարիներու տնօրէն Ար- փի Վարդանեան նշանակուած է կազմակերպութեան գործադիր տնօրէն: Ան մէկ տարուան համար Ուաշինկ- թրնի մէջ պիտի վարէ իր նոր պաշտօնը: Ա. Վարդանեան նախապէս եղած է Համագումարին Ոչ կառավարական կազմակերպութիւններու Մարզու- մի կեդրոնին տնօրէն:



ԷՃԵՒԻՏ ՍՏԱՇՈՂՈՒՄ Ե «ԱՐԱԲԵԿԻՉՆԵՐՈՒ» ԿԵԱՆՔԻ ԲԱՐՕՐՈՒԹԵԱՄ...

